

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ՍՈՒՆԳՈՆԿՅԱՆԻ ՉԱՓԱՆՈՆ

Մ. Խ. ՆԱԲՏԱՆ

Գաբրիել Սունդուկյանը թատերախաղերից, արձակից ու նամականուց բացի թողել է նաև չափածո գրվածքներ, որոնք առանձին վերլուծության նյութ չեն դարձել:

Սունդուկյանի բանաստեղծական էջերի առանձին նմուշների անդրանիկ հրապարակումը կատարել է վաստակաշատ բանասեր Երվանդ Շահազիզը՝ շուրջ հիսուն տարի առաջ¹: Այնուհետև Սուրեն Հարությունյանը դրանց մի մասը օգտագործել է թատերագրի երկերի իր կազմած և խմբագրած «երկերի լիակատար ժողովածուի» ներածական հոդվածում²: Սունդուկյանի ինքնուրույն և թարգմանական բանաստեղծական էջերը զգալի տեղ գրավեցին նրա երկերի ակադեմիական լիակատար քառահատորի շորրորդ հատորում³: Այդ գրքում կան թատերագրի ամբողջական և թերավարտ ինքնուրույն ու թարգմանական տասնմեկ բանաստեղծություն: Ինչպես ցույց է տալիս Սունդուկյանի արխիվի ուսումնասիրությունը, դեռ սպասում են լույս աշխարհ գալու նրա զրաբար, ֆրանսերեն բանաստեղծությունները, թիֆլիսահայ բարբառով գրված բանաստեղծությունների տարբերակները: Սիայն այդ ամենը ի մի ամփոփելով մենք կկարողանանք ներկայացնել Սունդուկյանի չափածո էջերը ամբողջությամբ:

Սունդուկյանի բանաստեղծությունները բաժանվում են երեք խմբի. 1. զրաբար ինքնուրույն բանաստեղծություններ, 2. թիֆլիսահայ բարբառով գրված ինքնուրույն բանաստեղծություններ, 3. թարգմանական բանաստեղծություններ:

1. Գրաբար ինքնուրույն բանաստեղծություններ: Սունդուկյանը տակավին տասնամյա երեխա, հորինել է զրաբար բանաստեղծություններ, որոնք հասել են մեղ այդ շրջանի ձեռագրերով:

Մանուկ հեղինակի ինքնուրույն բանաստեղծությունների նյութերը կրոնական ավանդություններ են, մոր գովք, որդիական սեր և նվիրվածություն:

Իր առաջին բանաստեղծությունը նա հորինել է Հովհաննես կաթողիկոսի Թիֆլիս կատարած այցելության առթիվ: Այն կրում է «Յարգանք Եկատրուլեան սրբազնակատար և ռեդհանուր կաթողիկոսին մերոյ Տեառն Յովհաննիսի Ութերորդի ի Մայրաքաղաքն ի Տփղիս, ի 10 նոյեմբերի ի 1835 ամին

1 Ե. Շահազիզ, Գաբրիել Սունդուկյանց, կենսագրական նյութեր, Երևան, 1927, էջ 4, 26:

2 Գ. Սունդուկյանց, Երկերի լիակատար ժողովածու մի հատորով. Կատակերգություններ. Արձակ երկեր. Նամակներ, խմբագրությամբ Ս. Հարությունյանի, Երևան, 1934:

3 Գաբրիել Սունդուկյան, Երկերի լիակատար ժողովածու չորս հատորով, հատ. 4, տեքստը պատրաստեց Սուրեն Հարությունյան, Երևան, 1961, էջ 525—535 (այսուհետև՝ Գ. Սունդուկյան, Երկերի լիակատար ժողովածու չորս հատորով):

Քրիստոսի» վերնագիրը: Բանաստեղծությունը վկայում է, որ մանուկ հեղինակը բավական ծանոթ է քերթության արվեստին:

Արտի և մրադ՝ իմ խաղաց՝ գաղանի
Շարձին խոստումն՝ արտասել յայտնի
Ըզնառ խոնգանագ տրփխսեան նետի
Ընդ զալուստ Վենիդ՝ մեռ Քաղապետի.
Աւագ Տեղակալ Նախածին գանի,
Տանն Արարտայ՝ Հայկեան գրոհի:
Հոգեկան գաւակս Դիտիդ բնորական
Մատչիմ ի համրոյր Աջոյդ Տիրական,
Մաղթելով յերկնից Ձեր աստուածական,
Ի նպաստ Անձին հօրդ հանրական.
Ըզնեա լինելով շաղագ նախնական,
Պարհելով անջինջ գաւանդ մայրական:

Բանաստեղծության մեջ առկա են զրաբար բառերի այնպիսի առումներ, որոնք չափածոյի մեջ կարող է կիրառել միայն բավականաչափ զրաբար իմացող մեկը: Ենթադրում ենք, որ Սունդուկյանի հմուտ զրաբարագետ ուսուցիչը՝ բանասեր Զրպետը, հղկել ու կոկել է իր սանի գրվածքը, որ բնական էր:

Սունդուկյանի զրաբար բանաստեղծություններից է 1837-ի նոր տարվա առթիվ մորը՝ Թեկղեին նվիրած «Ի մուտ ցրնծալից» ոտանավորը, նախորդի նման հյուսված երկտողերով: Բերենք մի քառյակ միայն.

Ի մուտ ցրնծալից սոյն նորոգ տաւոյ,
Մատչիմ ի համրոյր Մօրդ իմ սիրելոյ,
Ընկալուշ օրից՝ զրբոց մայրական
Հեգուրեամբ սրտի, ձայնիւ մանկական:

Սունդուկյանի մանկական շրջանի բանաստեղծությունները պարզ են, միամիտ, սակայն միաժամանակ ջերմ են, սրտառուչ, հոգեբուխ:

Սունդուկյանի արխիվում կան նաև անթվակիր ու անստիպ զրաբար բանաստեղծություններ, որոնք արժեր որ տեղ գրավեն նրա երկերի լիակատար ժողովածուում: Դրանցից է «Թեկղէ մեր ծնող՝ տիրուհի տիկին»⁵ բանաստեղծությունը, որի մեջ կան արդեն խոսքի առարկայացման նշմարներ: Առավել բարեհնչուն է, մշակված «Զատկական շնորհատրութիւն»⁶ երկարաշունչ ոտանավորը, որը ավարտվում է հն հանգով: Գրաբար է նաև «Երրորդութիւն միասնական»⁷ երկարատող ոտանավորը՝ կրոնա-քարոյաբարովիչ ոգով:

Նախորդների նման անստիպ է նաև այն հանգով վերջացող ընդարձակ մի ոտանավոր՝ «Մնունդ խրախման»⁸ անունով: Այդտեղ արդեն կան թևավոր խոսքեր, ընդհանրացնող յուղսովորներ. աշխարհը անդավոր է, ասում է բանաստեղծը, սակայն՝ «Միայն գործք բարի հաւիտենական»:

⁴ Նույն տեղում, էջ 526:

⁵ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Գ. Սունդուկյանի արխիվ, Գեղարվեստական ստեղծագործություններ, № 160—1, Ա էջ (այսուհետև՝ Գ. Սունդուկյանի արխիվ, Բանաստեղծություններ):

⁶ Նույն տեղում, № 160—1, Բ էջ:

⁷ Նույն տեղում, № 160—1, առանձին մի կտոր թղթի վրա:

⁸ Նույն տեղում, № 162—1:

Զգալի է, որ հեղինակի խոսքը աստիճանաբար դառնում է առավել ապավորիչ ու ներգործուն, հատկանիշներ, որոնք հետագայում դրսևորվեցին նրա թիֆլիսահայ ինքնուրույն բանաստեղծություններում և ողբերկնից կատարած չափածո թարգմանություններում: Գրաբար բանաստեղծությունները վարժանքի դեր կատարեցին, մարդեցին հեղինակի զրիչը, տող ու տուն, բանաստեղծություն կառուցելու ունակությունը:

2. Թիֆլիսահայ բարբառով զրված ինֆուրույն բանաստեղծություններ: Շատ չեն սրանք բանակով, սակայն բացահայտում են հեղինակի անուրանալի բանաստեղծական շնորհքը: Սունդուկյանը գրել է այդ բանաստեղծությունները հասուն տարիքում, դրանցով երգել ամենանվիրական զգացմունքը՝ սերը: Մանուկ հասակից բանաստեղծական գրիչ վերցրած, գրաբար չափատողեր հեղինակած Սունդուկյանը այրական տարիքի բանաստեղծություններով մեզ հետ խոսում է արդեն որպես ձևավորված քերթող: Սերը այլևս մանկական սերը չէ՝ իր աննման մոր նկատմամբ, որ հնչում էր բանաստեղծական թոթովանքով, կրոնական, հաճախ աննյութական, վերացական պատկերներով, համեմատություններով ու դատողություններով: Հասուն մարդ արարածի սերը իր նմանի՝ սիրեցյալի նկատմամբ բանաստեղծի գրչի տակ կենդանանում է առարկայական, խոսուն, շոշափելի մանրամասնություններով, բնորոշ դրվագներով: Հոգին ու մարմինը, զգացմունքն ու խոհը Սունդուկյանի այդ բանաստեղծություններում դրսևորվում են առողջ, կենսասեր կերպարով: Նյութին պատշաճում են հյուսվածքի արվեստը՝ լեզուն, բանաստեղծական ձևերը, համեմատությունները, պատկերները: Ամեն ինչ ժողովրդական է՝ առողջ, բարձր, կատարյալ՝ ինչպես իր թատերգություններում: Իր հերոսներն ու հերոսուհիներն են տառապում, մրմնջում, անձայն լալիս սիրո խաղերում:

Սիրեկանըս ինձ ոստ էկավ, սալամ էրիտ ծիծաղելով,
Քաղցր աճկով մրախկ արավ՝ սրտիս ցավը փառատելով.
էկավ մոտրս, ձեռըս բռնից՝ քեփիս ավալը հարցնելով,
Սիրտըս բրլավ, էլ չը դիմցա, զանգորվեցա ես լաց լելով:
Ասի քե՛ քու սիրու կրակով սիրտըս էրած ու խուլված է,
Ուշկ ու միտկըս ֆիմեն տաբած, խիլքս մըքնած ու խառնած է.
Մաճ իմ գալի յանա-յանա, կիներս քու նանփին մաշած է,
էշխիդ շանգով, հուլի⁹ հանգով հոփիս ջանեմես հանած է:
Խրդնաց յարըս, շիներս նրեգավ, փարըրվեցավ, դոշիս կպավ,
Իւ նազ ձենով ավատացուց, վուր իմ սերը սիրտը նեղավ.
էշխի բանգով իս հարփեցա, դրախտ ու դրժուխկ մտես նեղավ.
Զարքիմ, տեսնիմ՝ էրագումն իմ, լացով ջիգաբս կրակ նեղավ¹⁰:

Սունդուկյանը սիրել է այս բանաստեղծությունը, գրելուց հետո մշակել, փոփոխել առանձին բառեր ու կապակցություններ, ձգտելով գրական-գեղարվեստական կատարելության հասցնել ստեղծագործությունը¹¹:

⁹ Այս բառը համարել են անընթեռնելի և տեղը կետեր են դրել:

¹⁰ Դ. Սունդուկյան, Երկերի լիակատար ժողովածու չորս հատորով, հատ. 4, էջ 531:

¹¹ Հեղինակի արխիվում պահպանվել են նախագիրը՝ մշակումը և մաքրագիրը: Նախագրում կատարված հղկումներից բերենք մի երկու նմուշ՝ ընթերցողին այդ մշակումներից մի որոշ զառափար տալու համար: Դնում ենք նախնականն ու մշակումը տակետակ.

- | | |
|------------------------------|-----------------------------|
| 1. Սիրեկանըս ինձ միտ էքի. | 3. Խիլքս ֆիգ համա խառնած է. |
| Սիրեկանըս ինձ ոստ էկավ: | Խիլքս մըքնած ու խառնած է: |
| 2. Դարդիս պատհառը հարցնելով. | 4. Էշխի հոտով իս հարփեցա. |
| Քեփիս ավալը հարցնելով: | Էշխի բանգովն իս հարփեցա: |

Բանաստեղծության վերջնատողը՝ «Զարթիմ, տեսնիմ՝ էրագումն իմ», շատ հեռավոր կերպով հիշեցնում է Սմբատ Շահադիզի 1864 թ. հունվարի 2-ին գրած «Երազ» («Ես լսեցի մի անուշ ձայն») բանաստեղծության վերջնատողը, որ կրկնվում է նուրբ ևրանդավորումներով շորաքառյականոց գրված քի ամեն տան շորրորդ տողում, արտահայտում վիշտը՝ «Բալո ափսոս, որ երազ էր»:

Ու միայն այդքանը: Մնացյալով Սունդուկյանի բանաստեղծությունը՝ հին Խիֆլիսի համ ու հոտով, սիրո սուրբ զգացմունքով, բարձր արվեստով հյուսված մի գործ է, գրված 1867 թ. հունիսի 29-ին: Գուցե Սունդուկյանը ծանոթ էլ չի եղել Շահադիզի «Երազին», քանի որ երկուսի գրածները էսպես միանգամայն ինքնաբերական, ինքնօրինակ են, տարբեր նյութերով ու արվեստով կերտված:

Այդ բանաստեղծությանը իր ոգով ու ոճով, զգացմունքի վսեմությամբ հարում է «Ա՛խ, իմ սիրեկան»¹² բանաստեղծությունը: Հեղինակը նորի համար գտել է նոր շափ, նոր հանգ ու վանկ, կառուցման նոր եղանակ՝ նախորդից զգալապես տարբեր: Սակայն նախորդի նման սա էլ կուռ է, աներկարաբան, ինքնախոսության նման մտերմիկ շնչով տոգորված:

Ա՛խ, իմ սիրեկան, ինձմեն հիռացար,
Ի՞նչ գեթ արի քիզ, վուր ինձ ուրացար.
Վիրշր քե էդ էր, էլ ո՞ւր մոդ կացար,
Քու սրտի սերը ինձ ո՞ւր խոստացար:

Բանաստեղծությունը որպես երգ Սունդուկյանը մտցրել է «Խաթաբալա» պիեսի մեջ, այն երգում է «նուրբ կաղմվածքով և կախարդիչ դեմքով» քսանամյա Նատալիան՝ քառասնամյա Իսայու կինը¹³:

Այդ շաբբի ամբողջական երրորդ բանաստեղծությունը «Հուտ կալնելու»¹⁴ խաղն է:

Բոլիդ սալրու շինար սագած,
Պոռնիբո շաբուլ բաց արած,
Ղուլիդ նման դասնդ իմ կանգնած:

Այդպես՝ Լրեք տուն. զգացմունքով, սիրո կրակով, վայելքի երազանքով ու փառաբանությամբ գրված, ուր սիրահարը սիրուհուն համեմատում է ծագող արևի հետ, որի «շափաղը» աշխարհ է ոսկեզօծում:

Մյուս երկու բանաստեղծությունը, գրված թիֆլիսահայերենով, ամբողջական չեն. «Բաղումըն վարթին ի՞նչ կոնիմ»¹⁵ բանաստեղծությունը ոգով ու ոճով հարում է նախորդ երեքին, սակայն թերավարտ է: Վերջինը՝ «Զիմ ուղում իմ ասի»¹⁶, հեղինակն մի քառատող է, սիրո խաղերին անհարիր, բայց մի փոքր բեկոր՝ Սունդուկյանին բնորոշ երգիծանքով թաթախված, «հաշաբարներին» սեպնոդ¹⁷:

¹² Բ. Սունդուկյան, Երկերի լիակատար ժողովածու շորս հատորով, հատ. 4, էջ 532:

¹³ Նույն տեղում, հատ. 1, Երևան, 1951, էջ 41, 43, 129—130:

¹⁴ Նույն տեղում, հատ. 4, էջ 533:

¹⁵ Նույն տեղում, էջ 533, 534:

¹⁶ Նույն տեղում, էջ 535:

¹⁷ Նույն տեղում, էջ 533: Ափսոսանքով նկատենք, որ մեր նշած Լրեք բանաստեղծություններից մեկը տպագրված է զգալի թերություններով. Սունդուկյանը, շատերի նման, հաճախ իրար կպած է գրում բառերը: Եթե նա ինքը տպագրել տար, հասկանալի է, բառերը կպած չէր թողնի: այլապես Կատալանի անհարիր բաներ, ինչպես որ ստացվել են տպագրված տեքստում:

Մենք կարող ենք Սունդուկյանի չափածոների կարգը դասել նաև «Պեպոյի» առաջին արարվածի Թ տեսիլի սկզբում Շուշանի խոսքերը, որոնք մաքուր չափածո են, թեև ապվել են ու տպվում են առանց տողատման: Արձագանքելով Գիթոյին, որն առում է. «է՛հ, աստո՛ւծ, օրհնվի քու դադաւտանը», Շուշանը հայտնում է իր սրտի ցավն ու մրմուռը. «Ա՛խ, աստո՛ւծ, վա՛խ, աստո՛ւծ. վուրին կու տա՞ս սելով փետ, վուրին չիս տա՞ ցա՛խ, աստո՛ւծ»¹⁸: Սա իսկական բանաստեղծական մի վեցյակ է՝ կանոնավոր տողերով, հանդուժանկով:

Ա՛խ, աստո՛ւծ,	Սելով փետ.
Վա՛խ, աստո՛ւծ.	Վուրին չիս տա
Վուրին կու տաս	Ցա՛խ, աստո՛ւծ:

Սունդուկյանը, օգտվելով ժողովրդական սգո երգերից, տվել է դրանց նմանություններ հյուսիսի չափածո էջեր՝ ուրույն երանգավորմամբ: Դրանցից են «Օսկան Պետրովիչն էն կինքումը» 1866 թ. գրած կատակի առանձին երգեր, որոնք կապվում են Օսկանի հետ: Դրանք սգո ասերգեր են, երբ հանգավորումը և վանկավորումը շատ չեն աչքի զարնում, ներքին ապրումը և այդ ապրումի ռիթմիկ արտահայտություններն են առաջ տանում: Բերենք այդ բեկորներից մի երկու նմուշ, որոնց նման սգո երգեր շատ ունի մեր ժողովրդական բանահյուսությունը (Լոռի, Շիրակ, Զանգեզուր և Հայաստանի ուրիշ գավառներ):

Մարթա, սգալով.

Իմ փաշա ու դռնա Օսկան ջան...
 Ինձմեն խոռով ո՛ւր իս գնում...
 Թե ինձ կու սիրիս, մե ձեն տու ինձ...
 Քու լենքին ու երկնքին մեռնիմ. Օսկան ջան...
 Քու ժամասեր ջանին մեռնիմ. Օսկան ջան...
 Հիշտլմենու մոդ ցնծում կուլիս. Օսկան ջան...

Կեկիլ, սգալով.

Ա՛խ, մամի ջան, ու ջա՛ն, մամի ջան,
 Քու հանաֆի ջանին մեռնիմ, մամի ջան,
 Ուրախ օրըս ինչի՞ սիվցրիւ, մամի ջան,
 Վա՛յ իմ ապրելուն, մամի ջան ու մամի ջան:
 Ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, մա՛մի՛, ջա՛ն:

Խամլերի, զաղիբան ծածկած մտնում է սգավորների մոտ և սգալով.

Ա՛խ, Օսկան ջան, ու վախ, Օսկան ջան,
 Ասկի ոռւֆար, իմ Օսկան ջան.
 Արա, մե ձեն հանե, Օսկան ջան.
 Քու ֆաղցր ձենին մեռնիմ, Օսկան ջան,
 Դուն էտղանց վի՛ կաց, Օսկան ջան.
 Քու մագիեր ես պսոկիմ, Օսկան ջան:
 Քու պետլած ջանին մեռնիմ. Օսկան ջա՛ն!¹⁹

¹⁸ Նույն տեղում, հատ. 2, Երևան, 1951, էջ 43:

¹⁹ Նույն տեղում, հատ. 1, էջ 156—157:

Սունդուկյանի բանաստեղծությունների մեջ, ի թիվս այլ անտիպների, կա մի ուշադրավ քերթված: Գրված է ուրիշի ձեռքով: Սակայն եթե նկատի ունենանք, որ հեղինակը ամբողջ պիեսներ թելադրել է ուրիշներին, որոնք զրև են իրենց ձեռագրով, և դա եղել է Սունդուկյանի սովորությունը, թերևս կարելի է ենթադրել, որ տվյալ քերթվածի հեղինակը ևս ինքը Սունդուկյանն է: Ահա այդ բանաստեղծությունը.

Թիվիլգումը մեկ հին վարի կա՝ պետկ է ասեմ, ախնջ անին՝
 Զորեմ կողմ ուխտ զնալն չէ, կաբելի է պետմ անին.
 Ամեն ախշիկ սրտի միջին մե բարի բան ուխտ կանին.
 Ինչիկ ոտով կիրակիբն հաց ու կերակուր կու տանին,
 Ամենն իրանց ցավ ասելով, սրտիցն հոգեց կը հանին:

Առաջվա ժամանակը խալիսը վրսոն կը հանեին.
 Քոչարա ծարի տակին օղչարն մատաղ կանեին.
 Էնտեղեվետ կու էփեին, լոչեռով կու բաժանեին.
 Գրեցողն ու էկողն էնտեղ կը հանգրստանեին:
 Զար տերտեր երբ իմացավ զնաց մատենց սրփագանին:

Սրփագան ասեց տերտերին. ես էստուր ի՞նչ բան անեմ:
 Զար տերտերը միտկըն արավ, հետս մե կացին կը տանեմ.
 Մբան բազուն կու կտրեմ ծառն, տակիցն կհանեմ,
 Մեջըն բարով կըլրեցնեմ, ժողովուրդին էսպես կանեմ.
 Գան-տեսենն՝ էլ ծառ չկա, էնտեղ մատաղ չը սահմանին:

Օվ անցկացավ, էլ ծառ չկէր. էս ի՞նչ հուշք բան է.
 Օվուր էտ ծառն կտրել է, դատաստան աստված անե.
 Սաստիկ ցավով հիվանդանա, բող սիվ ցավն՝ նրան տանե,
 Օվուր տիսնե, բող վախենա, նա իսկի էղպես բան չանե.
 Էն ծառն չվաթ էր անում աղբատ ու խեղն ու իշխանին²⁰:

3. Թարգմանական բանաստեղծություններ: Սրանց մեջ մենք գտնում ենք ամբողջական թարգմանություններ ու բեկորներ: Վերջիններս մերված են թատերախաղերին. հյուսված այս ու այն հերոսի և հերոսուհու խոսքին:

Սունդուկյանը իր թարգմանությունները կատարել է մի քանի լեզվից: Տակավին տասնամյա հասակում նա իր մորը ձոնած գրաբար բանաստեղծությունը վերածել է ֆրանսերենի: Քանի աճել-դարգացել է Սունդուկյանը, այնքան էլ աճել ու խորացել է նրա սերը լեզուների հանդեպ, լեզուների իմացությունը: Կատարելությամբ իմացել է ֆարսերեն, պարսկերեն, ֆրանսերեն, ռուսերեն, թուրքերեն ու արաբերեն: Նրա հերոս-հերոսուհիները նույնպես միալեզու չեն. Պեպոն երգում է պարսկերեն և թուրքերեն, Զամբախովի ծառա Սարգիսը՝ պարսկերեն ու թուրքերեն: Արուիինն ու էփեմիան, մայրենի լեզվից բացի, արտահայտվում են և վրացերենով:

Տակավին Պետերբուրգի համալսարանում ուսանելիս, 1847 թ. քսաներկու տարեկան, հասակում, ֆարսերեն չափածո մի հեքիաթ Սունդուկյանը թարգմանում է վրացերեն չափածո և ուղարկում մորը²¹:

20 Գ. Սունդուկյանի արխիվ, Բանաստեղծություններ, № 167—I:

21 Գ. Սունդուկյան, երկերի լիակատար ժողովածու չորս հատորով, հատ. 4, էջ 144—145:

Յավոք, Սունդուկյանի չափածո թարգմանությունները քիչ են և զլխավորապես մերված են թատերախաղերին՝ հերոս-հերոսուհիների գունավորման, նրանց բնորոշ մթնոլորտի պատկերման համար: Եվ ամեն անգամ օտար երգի բնագիրը թատերախաղին հյուսելիս Սունդուկյանը տողատակին զետեղում է նրա թարգմանությունը: Պեպոն, օրինակ, մի տեղ պարսկերեն երգում է.

Շաւաբի Շամ շուղա ասը,	(Գինին Դամասկոսի է եղել,
Շուրհի նա դուրադ,	Կասկածոն չկա,
Արաղի փշմիշ ասը,	Հյուրը փշմիշի է,
Բար դար փիալա:	Վեր առ փիալանք) 22:

Մի ուրիշ անգամ մենք նրանից լսում ենք հետևյալ թուրքերեն ժողովրդական երգը.

Ազիզմ, նաշար, աղամա,	(Սիրելիս, անհար, մի՛ լար,
Գլուն դրը, գեշար, աղամա,	Օր է, կանցնի, մի՛ լար,
Բու դափի քարս բաղլիան,	Այս դուր քարս կողպողը
Բիր դլուն աշար, աղամա:	Մեկ օր բաց կանե, մի՛ լար) 23:

Զամբախովի ծառա Սարգիսը երգում է պարսկերեն.

Ֆասլի բրհար,	(Գարնան ժամեր,
Սուրաբի յար,	Անուշ պատկեր,
Չեշմի խումար,	Խումար աչքը,
Լալի նրզյար,	Կարմիր բշեր,
Դաղե շարար,	Սիրո նետեր
Բար դիլի գար:	Սիրտս եմ ցցել) 24:

Սունդուկյանի թատերախաղերում զրանց կողքին տասնյակներ են հայերեն երգերը, որ հնչեցնում են գործող անձինք նաև նվագարաններով:

Սայաթ-Նովայի խաղերից բացի թատերագիրը իր գրվածքներում օգտագործել է նաև երգեր, որոնք ժամանակին տարածված են եղել հայության մեջ. նրա պիեսներում մենք գտնում ենք Գևորգ Միրիմանյանցի նշանավոր «Հայոց աղջիկներ» երգը, որ երգում է Օսկան Պետրովիչ Իրասածովի դուստր Կեկելը («Գիշերվան սաբրը խեր է»).

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս եմ գալիս, ասում եմ ես՝ ա՛խ, և այլն²⁵:

Նույն երգից, այս անգամ մի ամբողջ տուն, սաղի նվագակցությամբ երգում է «Եվայլն կամ Նոր Դիոգինես» կատակի հերոսներից սազանդար Յավանդուլը.

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս եմ գալիս, ասում եմ ես՝ ա՛խ.
Հավում եմ, հավում օտարության մեջ,
Ա՛խ, սիրտս է խռվում, ցավից չկա վերջ²⁶:

22 Նույն տեղում, հատ. 2, էջ 23:

23 Նույն տեղում, էջ 34—35:

24 Նույն տեղում, հատ. 1, էջ 132:

25 Նույն տեղում, էջ 26:

26 Նույն տեղում, էջ 210:

Երգասեր է նաև Պեպոյի քույր Կեկելը: Նա էլ վշտի պահին երգում է ընտանի նավերի երգը.

Սիրելիդ, ինձ ատել ես,
Ատել ես, նախատել ես.
Ջիգարս կտրատել ես,
Արնաշաղկ էս արել:
Ինձ տեսնելիս տուր բարով,
Խորհուրդդ ասա գրով.
Ինձ խո մորթել չես սրով,
Անտուր մատաղ ես արել²⁷:

Սունդուկյանի հերոսները երգում են նաև Ռ. Պատկանյանի «Բաժակներ առնունք, եղբա՛րքը»²⁸, Ք. Պատկանյանի «Եղբա՛րք, մի շուրջ ժողվեցեք»²⁹ և ուրիշ երգեր:

Երգը, նվագը, չափածոյի արտասանւթյունը Սունդուկյանի պիեսներում ստեղծում են հին Թիֆլիսին ինքնահատուկ մթնոլորտի երանգներ, թարմություն են մտցնում խաղարկության մեջ, զուսավորում կերպարները, մթնոլորտը հարազատորեն վերարտադրում նաև երգերով: Շաքարոն թուրքերեն երգում է.

Աղամ վար էի աղամլարն նախշի դր,
Աղամ վար էի դաշի օնդան յախշի դր,
Աղամ վար էի հալվան օնդան յախշի դր,
Աղամ վար էի դրնդրմասան յախշի դր:
(Այնպես մարդ կա՝ բոլոր մարդկանց զարդն է,
Այնպես մարդ կա՝ մյուսն իրանից էլ լավն է,
Այնպես մարդ կա՝ անասունից վառքարն է,
Այնպես մարդ կա՝ որ ձեռք չտաս է՛ն լավն է)³⁰:

«Քանգած օջախի» հերոսներից Գիթ Մոզին վրացերեն երգում է.

Հոյի՛ գարադրուլո մրվարե,	(Ո՛վ փառահեղ լուսին,
Բնելս վղի վար մամեսմարե,	նստած եմ խավարում, օգնի՛ր ինձ.
Մնարոլար գանմիարե,	Ձգի՛ր բո փայլուն լույսդ ինձ վրա,
Մեց գանմինարլե արե:	եվ լուսավորի՛ր բոլորին շուրջս) ³¹ :

Սարգիսն էլ տիրոջ տան գավիթը ավելուց հետո, ավելր ձեռքին երգում է.

Առագ դրադրնդա յամ, լամո,	(Առախի ափերումն եմ, հոգյա՛կ,
Չեջմեյ չրադրնդա յամ (կրկնել):	Աշերիդ բոցերումն եմ (կրկնել):
Իրիւմիշամ յարբմի, լամո,	Կուրցել եմ սիրուհուս, հոգյակ,
Յնուն սորադրնդա յամ (կրկնել):	Նրան որոնելումն եմ (կրկնել):
Լամո, լամո. խանյամո, լամո՛,	Հոգյա՛կ, հոգյա՛կ, խա՛ն հոգյակ. հոգյա՛կ,
Սարգի սուսան ջան, լամո՛,	Դալար շուշան ջան, հոգյակ,
Յարի վաֆադար, լամո՛,	Սիրուդ մտերիմ, հոգյակ,
Օ բոյա դուրբան, լամո՛:	Հասակիդ մատաղ, հոգյակ) ³² :

²⁷ Նույն տեղում, հատ. 2, էջ 72:

²⁸ Նույն տեղում, հատ. 1, էջ 207:

²⁹ Նույն տեղում, էջ 208:

³⁰ Նույն տեղում, հատ. 3, Երևան, 1952, էջ 48:

³¹ Նույն տեղում, հատ. 2, էջ 156—157:

³² Նույն տեղում, հատ. 1, էջ 121:

Արութինն ու էփեմիան ձաչնակցում են միմյանց վրացերեն երգի տողերով.

Կոկորո վարդո, աւ դամագդո, վաւ մոնա շէսի.
Պիրգեդ գաւվս խալի. շավ շավի րվալի.
Նախվա մսուրս շենի³³:

(Կոկոս իմ վարդիկ. մի բողմիր ինձ.
Բո ստուկն եմ ես:
Երեսիդ ունիս՝ խալ, սև-սև աչեր,
տեսիդ կառոտ եմ ես)³⁴:

Պէեսներում սփռված այլալեզու խաղերի բեկորների թարգմանություններով Սունդուկյանը նաև ղեղարվեստական մի լուրջ նպատակ է հետապնդել. մոլին ու անհասկանալի շթողներ այդ տողերը, այլ սեփական գրչով բացասելը դրանք:

Սունդուկյանի թարգմանությունների մեջ պատվավոր տեղ ունեն Պուշկինի երկերը. Միայն ցավել կարելի է, որ քիչ է թարգմանել ողու մեծ բանաստեղծից՝ մի ընդարձակ բանաստեղծություն և մի հատված «Կովկասի գերին» պոեմից: Բանաստեղծությունը թարգմանել է 1850 թ. ապրիլի 27-ին: Պոեմի հատվածը թարգմանության տարեթիվ չունի, սակայն երևում է, որ նույն շրջանի գործ է:

Պուշկինի բանաստեղծությունը, որ կոչվում է «Դուսաստանի զրպարտիչներին», Սունդուկյանը թարգմանել է զրաբար: Բանաստեղծության թարգմանությունը, որ վերնագրված է «Առ շարախօսս զԴուսաց», ինչպես երևում է, կարդացել են Սունդուկյանի դասախոսները, հավանել, քաջալերել: Թարգմանության ձեռագրի վերջում ուրիշի ձեռքով գրված է՝ «ОТЛИЧНО»: Նման կարծիք է հայտնված նաև հայերեն՝ զրաբար. «Անձկալի իմն էր տեսանել զայսպիսի բանաստեղծական ոգույդ դեռանշան և զբորբօք մշտավառ և դիրաշարք, ի յառաջադէմն անդուլ խաղալ»³⁵:

«Կովկասի գերին» պոեմի հատվածի թարգմանության վերջում նույն ողուսերեն ձեռագրով ընդգծված է՝ «прекрасно»: Ընթերցողին գաղափար տալու համար բերենք վերջին թարգմանության բնագիրը, որ ընդամենը վեց տող է.

Черкес оружием обвешан;
Он им гордится, им утешен;
На нем броня, пищаль, колчан,
Кубанский лук, кинжал, аркан
И шашка, вечная подруга
Его трудов, его досуга³⁶.

Սունդուկյանը թարգմանելիս չանացել է պահպանել երկի ոչ միայն բուն հնչունությունը, այլև առարկայական բանաստեղծական գեղեցկությունը.

Չերեքն է զինով՝ այնպէս զարդարեալ.
Որ այնու պարծի. նովա մխրաբեալ.
Ձեմբ նորա են—գրան՝ կապարն և հրացան,

³³ Նույն տեղում, հատ. 2, էջ 57:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Գ. Սունդուկյանի արխիվ, Բանաստեղծություններ, N 161—1:

³⁶ А. С. Пушкин, Полное собрание сочинений в десяти томах, т. 4, М., 1963, էջ 114:

Աղէղ Կորանայ՝ դաշնակ, առասան.
 Եվ սուսեր, որ է բաբեկամ անանց.
 Նորա հանգրստի, նորա անդութեանց³⁷:

Սունդուկյանի ինքնությունը և թարգմանական բանաստեղծությունների մի մասը պատվավոր տեղ կարող է գրավել մեր ինքնությունը և թարգմանական չափաժողովում: Մասնավորապես իր սիրո խաղերով Սունդուկյանը հանդես է գալիս որպես սայաթնովյան դպրոցի ներկայացուցիչ, իսկ պուշկինյան թարգմանություններով՝ որպես այդ ոլորտի սկզբնավորողներից մեկը:

ПОЭЗИЯ СУНДУКЯНА

М. Х. НАРЯН

(Резюме)

Великий армянский драматург Габриэл Сундукян оставил также и поэтические произведения. Он превосходно владел древнеармянским языком (грабаром), своим родным тифлисским диалектом и новоармянским литературным языком, а также несколькими европейскими и восточными языками (русским, французским, грузинским, персидским, турецким и др.), и это было для него надежным средством обогащения творческой палитры. В статье рассматриваются поэтические произведения Сундукяна — его стихотворения на древнеармянском языке, на тифлисском диалекте армянского языка и переводы с грузинского, персидского, русского и турецкого языков.

³⁷ Գ. Սունդուկյան, Երկերի լիակատար ժողովածու, շորս հատորով, հատ. 4, էջ 530: